

բառերի վաղնջական կազմութիւնը եւ նրանց ձեւարանական հոլովոյթը՝ կարող ենք դառնալ նրանց իմաստարանական մեկնութեան: Տեսանք, որ «ձիւն» նշանակում է «ձիմ» անող, իսկ «ձմեռն» — «ձիմ-ի» անող: Ի՞նչ է «ձիմ» եւ ի՞նչ է «ձիմ-ի»: Երկրորդ ձեւի մէջ ի ածանցը նոյն արժէքն ունի, ինչ որ վրացերէնի անուանակերտ ի մասնիկը. քաւ-ի, պիւ-ի: Գլուխ, բերան եւ այլն: Այդ ածանցով մենք եւս բազմաթիւ բառեր ունենք, ինչպէս՝ բար-ի, կար-ի չար-ի(ք):

Նկատենք, որ մեր լեզուի մէջ *ա*, *ծ*, *ց* լըծորդ են, այսպէս՝ *ձի-ն* — Ղարարաղ եւ Գանձակ արտաբերում են *ծի-ն*. մաղձ — դաւառական՝ մախց. *ձնկիմ* — *ծնկիմ*. *ձլել*, որ նշանակում է հողը պատռել, եւ՝ *ցել*, *ցելել* (հմ. գրաբար *ցելուլ*), որ նշանակում է հողը հերկել, իսկ *ցել* — վարած հող, հերկ: Այս հիման վրայ **ձիւան* — *ձիւն* կարող է մի արմատ լինել, որ ունենար երբեմն «*ցիւ*» կամ «*ծիւ*» կերպարանքը, բայց գրաբարի հիմքը կազմող բարբառի մէջ արտաբերուէր իբր «*ձիւ*», ինչպէս «*ծնկել*» արտաբերուած է նաեւ իբր «*ձնկել*» եւ «*ցելել*» — «*ձլել*»:

Արդ՝ այս արմատը մենք գտնում ենք վրացերէնի մէջ, որ է *ցիւ* (*լ*) եւ *ցիւ-ի* եւ նշանակում է ցուրտ, սառն, պաղ: Իր կրկնաւորն է *ցիվցիվի*, որ նշանակում է պաղ-պաղ, ցուրտ-ցուրտ. օրինակ՝ *ցիվցիվի ձղալի* — պաղ-պաղ ջուր, սառ ջուր: Անհնարին չէ, որ վրացերէնի մէջ պահուած լինի այս արմատի վաղեմի *ցիւ* եւ *ցիւ-ի* ձեւերը, որ պիտի կըռուէին մեր *ձիւ* եւ *ձիւ-ի* արմատներին: Բառգիրք չունեմ՝ ենթադրութիւնս ստուգելու համար: Հայերէնի մէջ այս արմատը կարող էր հնչել իբր *ծիւ*. եւ իբրք մենք տեսանք, որ Ղարարաղ եւ այլուր ստում են *ծիւ*. կարող էր հնչել եւ *ձիւ*, ինչ որ իբրք տեսնում ենք գրաբարի եւ նոր բարբառներից շատերի մէջ:

Այս հաշուով ուրեմն «*ձիւն*», որ է «*ձիւան*», նոյն է թէ *ցիւ-ան*, այսինքն *ցիւ անող*, հետեւապէս ցուրտ անող, պաղ անող, սառնարար: Իսկ «*ձիմ-ի-արան*», որ է «*ձմեռն*», նոյն է թէ *ցիւ-ի-արան*, այսինքն կրկին ցուրտ

անող, սառ ու պաղ անող, ցրտարար: Ահա թէ ինչու «*ձիւն*» ու «*ձմեռն*» ոչ միայն արմատակից են, այլեւ իմաստակից են: Ահա թէ ինչու «*ձմեռն*» բառը պէտք է տրոհել իբր «*ձիմ-ի-արան*», որովհետեւ ունինք *ցիւ-ի* արմատը:

Ահա նաեւ թէ ինչու «*ձմեռն*» բառի ե-ը մի նախաւոր իա է. *ձիւ-ի-արան*: Ահա նաեւ թէ ինչու մեր զիւղացին այդ երկու բառերն իրար կցած է դործ ածում յաճախ, երբ ուզում է «*ձմեռ*» ասել. — «*ձիւն-ձմեռ է*». «*էս ձիւն-ձմեռն ո՞ւր գնամ*» եւ այլն:

Սրանով պէտք է բացատրել նաեւ այն հանգամանքը, որ օտարի «*ձիւնը*» մեզ համար «*ձմեռն*» է եւ մեր «*ձմեռն*» օտարի համար «*ձիւն*» (Համ. յուն. *xion* — *ձիւն*. սանսկ. *him - a* — *ձիւն*, որից *hima - laya* — ընա-վայր *ձիւնի*: Նկատէք նաեւ, որ յուն. *xeimon* — *ձմեռ*, իսկ *xeima* — վատ եղանակ, փոթորիկ, մրրիկ ու նաեւ ցուրտ):

Կարծում եմ այս ընտանիքի բառ է եւ վրացերէնի *ծիլիւ-ա*, որ նշանակում է անձրեւ: Այս բառը եւ համարում եմ մի վաղնջական ձեւի ամփոփում, որ պէտք է լինէր **ծիլիւ-ա*: Մեր «*ձիմ-ան* — *ձիւ-ան*» փոփոխութեան հիման վրայ՝ ենթադրածս **ծիլիւ-ա* ձեւը պէտք է որ նախնարար եղած լինէր **ծիլիւ-ա*: Այս նոր ձեւով բառը կրկնաւոր է եւ *չ*. Աճառեանի մատնանշած հինգերորդ ձեւի կազմութիւնն ունի, այսինքն թեթեւցրած է իր երկրորդ բաղադրէր, ինչպէս մեր հեղեղ, հազագ, յոպոպ բառերը, որ եղած են երբեմն հեղ-հեղ, հագ-հագ եւ այլն (Տես Հանդ. Ամս. 1889): Այս հիման վրայ մեր վերականգնած վրացերէն կըրկնաւոր բառն եղած է անշուշտ **ծիւ-ծիւ-ա*, որից՝ **ծիւ-իւ-ա*, սրանցից՝ **ծիւ-իւ-ա*, իսկ սա *ծիւ-ա*:

Այստեղ մենք հանդիպում ենք մեր *ձիւ* եւ *ձիւ* արմատներին, բայց ոչ *ց-ով*, այլ *ծ-ով*, որ սակայն նշանակութիւն չունի, քանի որ *ա* = *ծ* = *ց*: Վրացերէնի *ծիւ* արմատը մնացած է մեր լեզուի մէջ. կարծում եմ այդ արմատով է կազմուած մեր *ծիւ-ալ* բառը իբր *ծիւ-ալի*, որ նշանակում է մի կողմից արեւել-